ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2022

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը (փակագծերում նշվածը):**

1) հր-շ, այժմ-ական, ան-անալ, տ-նդ **(ե)**
2) նախ-ան, մա-առել, արցուն-, ս-եմավոր **(ք)**
3) ա-ճատել, գա-թել, տա-տակ, չքնա-ատես **(ղ)**
4) գու-կան, աշխույ-, օ-արակ, դ-նդակ **(ժ)**

2 **Ո՞ր շարքի ոչ մի բառի բաց թողած տեղում երկհնչյուն *չի* գրվում:**

1) աղյուս-կ, գ-նագեղ, թ-նավոր, բ-ռաստան
2) ձ-լարան, ողջ-նել, ատամնաբ-ժ, հ-սահատ
3) փ-թեռանդ, արշալ-ս, երև-թական, ընկ-զենի
4) հ-զախռով, կապ-տակ, խարտ-շ, ուխտադր-ժ

3 **Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ, ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ
2) ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ՄԵԾ ՄԱՍԻՍ, ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ
3) ԱԾՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԼԱ ՄԱՆՇ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
4) ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում գաղտնավանկ կա:**

1) կայսր, ըմբշամարտ, հնարամիտ
2) ծանր, մեղրամոմ, կրթություն
3) մկրատ, վնասազերծ, հայրդ
4) հետզհետե, դպրոց, արագընթաց

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *է(ե)* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) սիգաճեմ, մտամոլոր, համատիրություն, միջադեպ
2) գիտակ, վիրահատել, ծիսակատարություն, դիպակ
3) սիրահոժար, գիրուկ, կիզանուտ, միգապատ
4) զինակիր, հանդիսատես, քմահաճույք, հանդիպակաց

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) փութալ-հապաղել, մսխել-կուտակել, անբասիր-խրթին
2) թանձր-նոսր, վաղանցիկ-մշտնջենական, իրական-երևակայական
3) փխրուն-կարծր, ստորին-գերագույն, ողորկ-խորդուբորդ
4) գլխավոր-անէական, միավորիչ-պառակտիչ, պատվարժան-անարգ

7 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***ախտալլուկ*** – հիվանդությունից տանջված, ***կղմինդր*** – թրծած աղյուս
2) ***ծանծաղ*** – փոքր խորություն ունեցող, ***լաջվարդ*** – ընտիր կապույտ ներկ
3) ***հովեկ*** – զեփյուռ, մեղմ քամի, ***վիրապ*** – խոր փոս
4) ***հողաթափ*** – տնային բաց ոտնաման, ***հյուլե*** – մանրագույն մասնիկ

8 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ, Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի:
2) Կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտապատկերն է դա:
3) Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր. դժվարությամբ եմ ճանաչում դիրքը, կապակցում մարդուն ու շրջապատը:
4) Ցոլակը նրա ձին էր՝ կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ:

9 **Ո՞ր տարբերակում է *գորդյան հանգույցը կտրել* դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:**

1) պարզաբանել հարաբերությունները
2) հեռանալ բարեկամներից
3) ենթարկվել դաժան դատաստանի
4) լուծել դժվարին, խճճված խնդիրը

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) խաղող, ծիրան, հավասար, հրապարակ
2) քույր, գլխարկ, ցորեն, աղյուս
3) միրգ, ողկույզ, ամրոց, մարագ
4) հավատ, կարմիր, մեկուսի, ամառ

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) դրամատուն, շարասյուն, հանքափոր, եզրակար
2) ենթաճյուղ, աստղաբույլ, նոթատետր, հողմացույց
3) եզրագիծ, զարդատուփ, տավղահար, զուգերգ
4) երկրամաս, հետագիծ, հացաբույս, միլիոնատեր

12 **Ո՞ր շարքի բառերից կամ բառաձևերից ոչ մեկը հոդ *չունի:***

1) ներս, բերդ, վերջերս, հանդ
2) վրձին, հոգուդ, բագին, սառը
3) թատրոն, դեղատան, հարս, ֆիդային
4) պատճեն, ձմռան, պարադոքս, գայիսոն

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:**

1) կեռման, խոհուն, երեկո, ընչացք
2) հարված, ուղղաձիգ, օթևան, անդաստան
3) ուսմունք, թուխպ, մոմլաթ, շոյանք
4) մթնշաղ, թմբիր, շինծու, կանթեղ

14 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):**

1) գրավել, գովել, բռնել, խրտնել
2) կանչել, արտահայտել, մեծանալ, սրբագրել
3) ջարդել, հուզվել, հոգալ, շնչել
4) ցատկոտել, լուսավորել, ավարտել, ծամել

15 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ *չկա:***

1) Եվ տարու վրա ծալվում է տարին, Ու խեղճ քարափը մենակ չի մնում:
2) Էլ ոչ մի թև ինձ չի տանի Դեպի բարձունքն արծաթյա:
3) Ձեզ հետ եմ, բայց միշտ հեռու եմ, հեռու, Ես ունեմ թովիչ մի առանձնարան:
4) Իմ սիրտն այնտեղ է, ուր նախնիքը մեր Կերտել են շքեղ կոթողներ հավերժ:

16 **Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:**

1) Ուշ գիշեր է:
2) Լույսը շուտով կբացվի:
3) Երեխանե՛ր, մի՛ վազեք:
4) Վերջապես խախտվեց լռությունը:

17 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Արդյոք որտե՞ղ պիտի հանգչի Գլուխս անտուն, թափառական:
2) Պարզվեց, որ հայրս ու Հակոբը մանկության ընկերներ էին:
3) Մարգարեներ են բոլոր հասկերը, Հասկը չի քնում. անքուն է հասկը:
4) Այդ պահին մենք հպարտ էինք ու չէինք կարողանում զսպել մեր հիացմունքը:

18 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Թեև լեռներից իջնող վարար ջրերը չորս կողմից շրջապատել են մեզ, և հողը երերում է դարձել, այնուամենայնիվ շատ հաճախ ենք գնում զբոսանքների, որ ծառերի տակ՝ քաղցրահամ աղբյուրների ակունքներում, խնջույքներ անենք:



19 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Բժիշկն ասում է թագավորին.
- Թագավո՛ր, ապրած կենա, ես ուզում եմ, որ դու քո պալատում մի սենյակ տաս ինձ, որ ապրեմ, և ոչ ոք էլ ինձ մոտ չմտնի, նույնիսկ պալատականները:

1) Բժիշկն ասում է թագավորին, որ ինքն ուզում է, որ թագավորը իր պալատում մի սենյակ տա իրեն, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ պալատականները:
2) Բժիշկն ասում է, որ թագավորն ուզում է, որ իր պալատում մի սենյակ տա իրեն, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ պալատականները:
3) Բժիշկն ասում է թագավորին, որ ինքն ուզում է, որ նա իր պալատում մի սենյակ տա նրան, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ պալատականները:
4) Բժիշկն ասում է թագավորին, որ ինքն ուզում է, որ ինքն իր պալատում մի սենյակ տա նրան, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ պալատականները:

20 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Ըստ լեգենդի՝ Եղիա մարգարեն ճանապարհ պիտի հարթեր այդ ազգի՝ ……. համար դեպի Աստված, և նրա ……. լեռները ……., և հարթ ճանապարհ բացվեր, բայց մարգարեի ձայնն անպատասխան …….:

(հրեա, կանչ, իջնել, մնալ)

1) հրեաների, կանչին, իջել էին, մնաց
2) հրեաների, կանչով, պիտի իջնեին, է մնում
3) հրեայի, կանչերից, իջել էին, է մնում
4) հրեայի, կանչերով, կիջնեին, մնաց

21 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի:**

1) Ութսունվեցի հոկտեմբերին Բուենոս Այրեսի օդանավակայանում վայրէջք կատարեցինք մենք հայաստանցիներս և հյուրընկալվեցինք տեղի հայկական համայնքի կողմից:
2) Երախտապարտ ժողովուրդը իմաստուն մի բնազդով զգաց ու ճանաչեց Մեսրոպի Հացեկաց գյուղի հողից ծնված իր զավակի սխրանքը ու սրբացրեց նրան դարերի մեջ:
3) Երեք օր է բացակայում են տնից և մենակ են թողել երկու անչափահաս երեխաներին:
4) Ահա և Բյուրականի աստղադիտակը հսկայական մի աչք ուղղված տիեզերական անհունին:

22 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Երկու օրում գրավելով հինգ քաղաք և ստրկացնելով բնակչությանը՝ Մակեդոնացին գնաց դեպի Կյուրոսի քաղաքը: Այդ քաղաքը շրջապատված էր ավելի բարձր պարսպով, քան մնացածները: Այնտեղ էր հավաքվել բարբարոսների մեծամասնությունը, ընդ որում՝ ամենառազմատենչները, այնպես որ այնքան էլ հեշտ չէր լինելու գրավել այն միանգամից:
2. Մինչ բարբարոսներն իրենց ամբողջ ուշադրությունը դարձրել էին մեքենաներին և պաշտպանվում էին այն վայրում, որտեղ դրանք կանգնած էին, Ալեքսանդրը իր զորքի մի մասի հետ բոլորից աննկատ քաղաք մտավ այդ գետի հունով և ջարդելով դարպասի մի փոքր հատված՝ ներս թողեց նաև մնացած զորքը:
3. Ալեքսանդրը պարսպին մոտեցրեց մեքենաները և ճեղքվածքներ բացելով պարսպի այդ մասում՝ մտածում էր առաջացած անցքերի միջով ներխուժել քաղաք:
4. Սակայն այդտեղ նրա ուշադրությունը գրավեց գետը, որը հոսում էր քաղաքի միջով և անձրևներից դառնում ավելի հորդառատ, բայց որն այժմ լիովին չորացել էր: Պարիսպները չէին անջրպետում նրա հունը մինչև հատակ, այնպես որ զինվորները կարող էին նրա տակով քաղաք մտնել:

1) 1, 3, 4, 2
2) 1, 2, 4, 3
3) 3, 1, 2, 4
4) 3, 1, 4, 2

23 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Լիլիթը, աղբյուրի մոտ նստած, ..., նայում էր դրախտի աստղազարդ երկնքին:

1) ականջը դրած նրա բյուրեղյա նվագին
2) զարթնեց սոխակների սիրահույզ դայլայլներից
3) անհամբեր մի քանի անգամ անցնել-դառնալով աղբյուրի շուրջը
4) և աստղերի հրաբորբ ողկույզները արբեցնում էին նրա սիրտը մի խորհրդավոր տենչանքով

24 **Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:**

1. Մենք ամենքս հյուր ենք կյանքում
   Մեր ծննդյան փուչ օրից
2. Մահը մերն է, մենք մահինը,
   Մարդու գործն է միշտ անմահ
3. Անց են կենում սեր ու խնդում,
   Գեղեցկություն, գանձ ու գահ
4. Հերթով գալիս, անց ենք կենում
   Էս անցավոր աշխարհից

1) 1, 3, 2, 4
2) 1, 4, 3, 2
3) 4, 1, 2, 3
4) 2, 4, 1, 3

25 **Նշված մտքերից ո՞րը Մխիթար Գոշի որ առակի գաղափարն է արտահայտում:**

ա. Բարձր է դասվում հողագործի տքնաջան աշխատանքը, առանց որի աշխարհը չի կարող լիանալ:
բ. Միասնական ջանքերով կարելի է հաղթել հզորին:
գ. Քննադատվում են արտաքինով գեղեցիկ, բայց հասարակության համար անպիտան և փուչ մարդիկ:
դ. Երբեմն մարդիկ գերագնահատում են իրենց կարողությունները և ուժը՝ հաշվի չառնելով սեփական հնարավորությունները:

1. «Բամբակենին և Սոսին»
2. «Աստղերը և Լուսինը»
3. «Ոսկին և Ցորենը»
4. «Արջ և մրջյուն»

1) ա-1, բ-2, գ-3, դ-4
2) ա-1, բ-4, գ-3, դ-2
3) ա-3, բ-2, գ-1, դ-4
4) ա-3, բ-4, գ-1, դ-2

26 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.**

Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,
Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:

1) Դավթի
2) Փոքր Սիերի
3) Մեծ Սիերի
4) Քեռի Թորոսի

27 **Նշվածներից որո՞վ է սկսվում Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:**

1) Գառնո ամրոցի նկարագրությամբ
2) Դվինի կործանման նկարագրությամբ
3) Աշոտ Երկաթ թագավորի դեմ հայ իշխանների ապստամբության նկարագրությամբ
4) արաբ հրոսակների՝ Հայաստան ներխուժումով

28 **Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում նշվածներից ո՞րը արտացոլված *չէ:***

1) իշխանության, օրենքների, մարդկային փոխհարաբերությունների դատապարտումը
2) արևելյան բնապատկերներ՝ ներդաշնակված քնարական հերոսի ապրումներին
3) աշխարհը և մարդկանց վերափոխելու համար մարդկությանն ուղղված պայքարի կոչը Աբու-Լալայի կողմից
4) հայրենիքի, կնոջ, ընկերների, բարեկամների հանդեպ քնարական հերոսի ատելության դրդապատճառները

29 **Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի «Ես» հատվածում ո՞րն է հերոսի բարոյական անկման բուն պատճառը՝ ըստ իր իսկ բնութագրման:**

1) հարբեցողությունը
2) փառասիրությունը
3) դավաճանությունը
4) կամազրկությունը

30 **Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծության մեջ է սերը զուգորդվում երկնքի աստղերը օղակող կախարդական շղթայի պատկերին:**

1) «Աշնան մեղեդի»
2) «Տխրություն»
3) «Գարուն»
4) «Fatum»

31 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը:**

Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Որպես ընդհանուր աղետից սարսած՝
Զարմացած կզգան ինձ այնքա՜ն մոտիկ,
Եվ հանկարծ այնքա՜ն թանկ ու հարազատ:

1) «Անվերնագիր»
2) «Հարդագողի ճամփորդները»
3) «Մահվան տեսիլ»
4) «Դանթեական առասպել»

32 **Ա. Բակունցի «Միրհավ» պատմվածքի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Անտառապահն ու Դիլանը մտերիմ ընկերներ էին և հաճախ էին միասին զբաղվում միրհավի որսով:
2) Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը հեռացավ գյուղից:
3) Դիլան դային ամուսնանում է, բայց մինչև խոր ծերություն հիշում է Սոնային:
4) Սոնան ամուսնացել էր քաղաքից գյուղ եկած ուսուցչի հետ:

33 **Նշել այն բառերի համարները, որոնցում կրկնակ բաղաձայն կա.**

1. դեռափ-իթ, 2. ու-ընթաց, 3. տա-ագիր, 4. ըն-իմանալ, 5. ու-արկել, 6. տասներկուե-որդ, 7. այ-ուբեն, 8. ամպիո-անի:

34 **Ո՞ր բառերում անկախ գործածություն *չունեցող* արմատ կա.**

1. ընդունակ, 2. սննդակարգ, 3. ծայրահեղ, 4. արնաներկ, 5. շողարձակ, 6. ծաղկաթերթ, 7. հիասքանչ, 8. ջրառատ:

35 **Ո՞ր տարբերակներում է ընդգծվածը հարակատար դերբայ:**

1. Բոլորն ուզում են երջանիկ լինել, Ամեն մեկը՝ իր <u>**հասկացածի**</u> պես:
2. Վհատ սոսկումի տանջանքով կզգաս, Որ <u>**որոնածդ**</u> բնավ չես գտնի:
3. Հեղինակը բավական ընդարձակ <u>**հավելված**</u> էր կցել իր աշխատությանը:
4. <u>**Մթամած**</u> երկնքում երբեմն փայլատակում էր կայծակի շեղբը:
5. Բուրմունքից <u>**արբեցած**</u> մի բզեզ քնել էր առէջների մեջ:

36 **Տրվածներից որո՞նք են մակբայներ.**

1. արտաքուստ, 2. մասին, 3. միասին, 4. այսպես, 5. միշտ, 6. իսկույն, 7. վաղորդայն, 8. ամբողջովին:

37 **Ո՞ր նախադասություններում բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Մի աղջիկ իր ընկերուհիների հետ անցավ իբրև մի թարմագեղ գարուն:
2. Միակ մարդը որ կողմնակից էր բյուզանդական կայսեր Կեսարի հրամանին նրա հավատարիմ զինակիցն էր:
3. Պայուսակները մեջքներին կապած ու պայուսակը որպես բեռ քաշող մի քանի պատանիներ էին:
4. Կայսրը որպես երկնքի որդի հավակնում էր կարծել թե իրավունք ուներ տիրելու ինչպես մարդկային տարերքին այնպես էլ բնությանը:
5. Այդ առեղծվածային դրամները իբրև բախտավորության խորհրդանիշներ հատուկ կտրվել էին նոր տարվա համար:

38 **Ո՞ր թվերի տեղում բութ պիտի դրվի:**

Մելանագույն թեթև թիկնոցի մեջ պարուրված(1) աստվածային կեցվածք ընդունած(2) կանգնած էր Համլետը(3) բեմի ճախակողմյան հատվածում աչքերում արցունքի երկու խոշոր կաթիլ որոնց դիպչելով(4) էլեկտրական լույսի շողերը բեկվում լցվում էին դահլիճ(5) ցրելով մութը: Հետո երբ բեմում եղած մարդիկ հեռացան(6) նա մոտենալով իր նման սևազգեստ մեկին(7) շշնջաց վերջինիս ականջն ի վար Մարդ էր Հորացիո:

39 **Տրված բառերից քանիսո՞ւմ արմատի հնչյունափոխություն կա.**

հնձվոր, երևութական, մատուցարան, խուսափել, վերջնագիծ, քննություն, լսափող, նկարչուհի:

40 **Բառերից քանիսո՞ւմ հոդակապ կա.**

գահերեց, գետնանուշ, հոգեորդի, անջրանցիկ, դառնաղի, որմնախորշ, լայնեզր, ազգուտակ:

41 **Տարբերակներից քանիսո՞ւմ հարկադրական եղանակով դրված բայ կա:**

- Նա հայտնեց, որ իրեն մի քանի անհրաժեշտ իրեր գնելու գումար է պետք:
- Նա խոստացավ, որ պիտի մի քանի օրից գործընկերներին հանդիպի:
- Եվ օդը սենյակիս Պիտի շարունակի մենակություն բառից անվերջ դողալ:
- Նա ինձ ասաց, որ ես նոր եմ ոտք դնում կյանք և պետք է իմանամ, թե դեռ ինչեր են սպասում ինձ:

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը ենթակա:**

- **Տնօրեն** Հակոբյանի և այցելուի միջև սկսվեց մի հետաքրքիր բանավեճ:
- Նրա **սիրտը** հաճելիորեն թրթռաց ինչ-որ քաղցր հիշողությունից:
- Իրիկնանում է. քաղաքում կամաց-կամաց զարթնում է երեկոյան **աղմուկը:**
- Քո ռունգերից, քո սրտից, քո հետքերից հառնած՝ Մեզ կողջունեն **օրերդ:**

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ վերաբերության անուղղակի խնդիր կա:**

- Իրենց անգիր պատմություններով Ինձ անէության սարսափից խլում Ու հանձնում են ինձ:
- Հանկարծ ինձ թվաց, որ իմ շուրջը գտնվող աշխարհը կործանում է իրեն:
- Մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները:
- Ամեն երեկո ծերունիները նստում էին տանիքներին և պատմում հին-հին քաջերից:
- Հին պատմության ուսուցչուհին շատ գոհ էր այս աննշան թեմայի շուրջ արտասանված հարուստ ճառից:

44 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել՝**

չափազանցություն, հանգ, փոխաբերություն, շրջադասություն:

Ես շա՜տ այրեցի իմ սիրտը ջահել
Սիրո ճամփեքին, սիրո երգերում,
Չկա քեզնից զատ բախտ ու վայելում,
Չկա ուրիշ վիշտ՝ քո վշտից ավել:

Ինչքան դեռ ունեմ կյանք ու ճանապարհ,
Ինչքան հույզ ու լույս, ձիրք ու նվիրում,
Ապահովություն, անդորր ու համբավ,
Իմ մա՛յր ժողովուրդ, ես քեզ եմ բերում:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բառասկզբի ***է*** ձայնավորը հնչյունափոխվելիս դառնում է ***ի:***
2. Բառամիջի ***յա*** երկհնչյունը հնչյունափոխվելիս դառնում է ***ե:***
3. Եթե գաղտնավանկով վերջացող բառին հոդակապով միանում է նոր բաղադրիչ, ***ը*** -ն միշտ սղվում է:
4. Բառասկզբի գրվող ***ը***-ն երբեք չի հնչյունափոխվում:
5. ***Յու*** երկհնչյունը հնչյունափոխվելիս և՛ կարող է դառնալ գաղտնավանկի ***ը***, և՛ սղվել:
6. ***Ույ*** երկհնչյունը կարող է հնչյունափոխվել միայն ***ու***-ի:

Բ մակարդակ

46 **Ո՞ր տառը կամ տառակապակցությունը տեղադրելու դեպքում բառը կհամապատասխանի տրված իմաստին. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. ***մեղ-*** (1. ***կ,*** 2. ***ք***) - թուլամորթ
բ. ***կար-ին*** (1. ***կ,*** 2. ***գ***) - գծագրական գործիք
գ. ***թ-ր*** (1. ***ույ,*** 2. ***յու***) – սխալ
դ. ***շառաչ-ն*** (1. ***յու,*** 2. ***ու***) - աղմկալից ձայն

1) ա-1, բ-1, գ-2, դ-1
2) ա-2, բ-2, գ-1, դ-2
3) ա-1, բ-2, գ-2, դ-1
4) ա-2, բ-1, գ-1, դ-2

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) մի(երկու), դիցուք(թե), առ(այն), ալ(կարմիր)
2) կողք(կողքի), շիլա(շփոթ), լույս(ընծայել), ի(դերև)ելնել
3) ի(հեճուկս), թեթև(քաշային), սրբություն(սրբոց), դեմ(հանդիման)
4) ըստ(իս), ձեռք(բերում), թփից(թուփ), տեր(Դանիել)

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) պատրանք, կպչուն, մատուցարան, ընդեղեն
2) ձեղնահարկ, սանրվածք, մանկավարժ, ուսուցում
3) փաղաքշանք, հրաման, խճապատ, դիտողություն
4) գործնական, պիտանի, մատենագիր, ընթացիկ

49 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) ընձյուղել-ծլարձակել, խաթարել-վնասել, ստվար-տարտամ
2) զայրույթ-ցասում, բովանդակ-ամբողջ, գողտրիկ-թաքուն
3) մառան-նկուղ, անճարտար-անհնար, վիհ-անդունդ
4) ժուժկալ-զուսպ, շրջմոլիկ-թափառական, հիշաչար-քինախնդիր

50 **Ո՞ր նախադասության մեջ սխալ կազմությամբ բառ *չկա:***

1) Ռաֆֆին չափազանց աշխատասեր էր. օրեկան երբեմն աշխատում էր տասնչորս ժամ:
2) Պետրոս Դուրյանի մահվանից անմիջապես հետո հոգեբարձուների խորհուրդը, անսալով բազմաթիվ երիտասարդների հորդորներին, որոշեց կառուցել մի մահարձան:
3) Հակոբ Պարոնյանը հրաշալի տիրապետում էր հունարենին, քանի որ ծնվել ու մեծացել էր Ադրիանապոլսում:
4) Մենք կարծում ենք, որ այդ ճանապարհով հնարավոր կլինի կանխել ձեռնարկության սնանկացումը:

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**

1) բնօրրան, պարփակել, խոսքարվեստ, տնտեսություն
2) յուրօրինակ, տարկետում, վիպասան, տանտիրուհի
3) բնութագիր, արևայրուք, ածխահանք, դիտարժան
4) տափօղակ, տրտմաշուք, խոտհարք, երեսունչորս

52 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա (ոչ բոլոր բաղադրիչները և դրանց քանակներն են ճիշտ նշված):**

1) թղթակցություն = 1 արմատ, 2 ածանց, 1 հոդակապ
2) հինգհազարամյա = 3 արմատ, 1 ածանց
3) անկայունություն = 1 արմատ, 3 ածանց
4) գերատեսչական = 1 արմատ, 3 ածանց, 1 հոդակապ

53 **Ո՞ր նախադասության մեջ դերանուն *չկա:***

1) Կոհակները օրորում էին նավը, կուտակվում, բախվում իրար, հեռու քշվում՝ կործանվելով ահարկու գոռոցով:
2) Օրերից մի օր Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Շապուհի ախոռներում, որտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ նժույգներ:
3) Տեսնելով ախոռապետի լկտիությունը՝ Վասակը՝ իբրև արժանապատիվ հայորդի, ապշում է և մտածում, որ հայերը նման բան չէին անի:
4) Թագավորը տագնապած ու հուզախռով հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ չընկնեն և սպասեն նոր լուրերի:

54 **Ձևաբանական վերլուծության ո՞ր տարբերակում սխալ կա:**

Լուսինը մի անհամբեր երեխա է եղել. մի օր, երբ մայրը խմոր է շաղախում, լալով գալիս է, մորից հաց ուզում, իսկ մայրը խմորոտ ձեռքով զայրացած ապտակում է լուսնին, անիծում, որ նա երբեք չկշտանա:

1) **եղել** – վաղակատար ձևաբայ
2) **լալով** - կանոնավոր բայ
3) **խմորոտ** - ածական
4) **երբեք** – ժամանակի մակբայ

55 **Ո՞ր նախադասության մեջ է *թե*-ն ստորադասական շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):**

1) Սոնան մանկության առվակի ջրերն էր կարոտել թե պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին Դիլան դային չիմացավ:
2) Եվ թախիծ և տրտունջ և տանջանք Դու ես այն թե աշխարհն է լացում:
3) Այս քամին է թափում աշնան չոր սաղարթը Թե օղի է թափվում իմ թմրած ուղեղին:
4) Ատում եմ ձյունը թե նա տեղում է ամառվա կեսին:

56 **Ո՞ր տարբերակում ներկա ժամանակի բայ *չկա:***

1) Ամպի տակից ջուր է գալիս, Դոշ է տալիս, փրփրում:
2) Երբ որ կամենաք, գնացեք-եկե՛ք, Հյո՛ւր եղեք նրանց Աղոթարանում:
3) Լռած զանգ է կյանքս… Ես՝ ավերակ վանքս, Էլ արարող չունեմ:
4) Վերից է նայում ցածում կանգնածին, Չի նայում երբեք ներքև ընկածին:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

1) մի՞թե, անկախ, ահա, անշուշտ
2) գոնե, հապա, ահավասիկ, հօգուտ
3) իրոք որ, լոկ, անգամ, սոսկ
4) միմիայն, ցավոք, թեև, իսկ և իսկ

58 **Ո՞ր նախադասության մեջ գերադրական աստիճանով դրված ածական կա:**

1) Ամեն տեսակ երգ երգեցի. ամենից լավ տաղն է էլի, Սայաթ-Նովի անմահական, դրախտային խա՛ղն է էլի:
2) Երբեմն մի ահագին բազմություն լիքը զամբյուղներով ուխտի էր գնում Սուրբ Մարիամ եկեղեցի:
3) Կյորեսը մեռնում էր, և ամենից ավելի նրան մաշում էր Գորիսը՝ մեծամեծերի այդ քաղաքը:
4) Եկար հուշիկ, անչար ավաղներով, Օրորներով ամենօրոր:

59 **Ո՞ր տարբերակում է ընդգծվածը ուղիղ խնդիր:**

1) Եվ դուք չե՞ք լսում տիեզերքի լեզուն՝ լռությունը, որ իմ հոգում ամեհի **երգ** դարձավ:
2) Նստել եմ, լաց եմ լինում Սան եկած վայրերիս համար, **Մեկմեկու** մերժած, լքած, Այս խռով ծայրերիս համար:
3) Հյուղակի ձախ կողմում ժայռը միանգամից ցածրանում էր, և այնտեղից երևում էին մի շարք **արտեր**:
4) Ամեն երեկո մի գեղեցիկ հեքիաթ էր պատմում իր սիրասուն **զավակներին**:

60 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը ճիշտ նշված:**

1) Եվ կրկին հիշողության հեռավոր ծալքերում արթնացավ նա, ումից բաժանվել էր ինքը պատանության տարիներին: *(անջատման անուղղակի խնդիր)*
2) Իշխանն այլևս չի պարծենա, որ իր դուստրն է հայոց արքունիքի միակ զարդը: *(միջոցի անուղղակի խնդիր)*
3) Կատարվեց այն, ինչին սպասում էին արդեն մի քանի օր: *(հանգման անուղղակի խնդիր)*
4) Հայաստանում այլևս գրագետ մարդ չմնաց, որ կարդացած չլիներ այդ ոգեշունչ հոդվածը: *(ժամանակի պարագա)*

61 **Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Եղնիկը, թեև ընտելացել էր մեզ, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:*
   Չնայած մեզ ընտելանալուն՝ եղնիկը, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:
2) *Հենց ձյունապատ կատարները ոսկեորվեցին արևի առաջին շողերով, արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:*
   Արևի առաջին շողերով ձյունապատ կատարները ոսկեորվելուց հետո արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:
3) *Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է, թե երբ գնացքը մոտեցավ նորակառույց կայարանին:*
   Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է գնացքի՝ նորակառույց կայարանին մոտենալու օրը:
4) *Ծովն այնքան հանդարտ էր, որ թվում էր շքեղ կտավից իջած անշարժ պատկեր:*
   Ծովը շքեղ կտավից իջած անշարժ պատկերի պես հանդարտ էր:

62 **Ո՞ր տարբերակում բաղադրիչ թերի նախադասություն կա:**

1) Վերջին մշուշն էլ կանցնի շուտով, Կփռվի լույսը խոր ձորերին:
2) Լռեցին իմ սրտում խնդություն ու երգ, Տխո՜ւր են կանչում աղբյուրներս հիմա:
3) Եվ տարիներն այսպես անցնում են, ու ոչինչ չի փոխվում նրա կյանքում:
4) Ոչխարի հոտը գիշերները մակաղում է վրաններից ոչ այնքան հեռու, իսկ առավոտյան սփռվում է սարով մեկ:

63 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ Հավետ քեզ կապված քեզ օտար եմ ես:
2) Հիվանդը լուռ նայում էր գորշագույն առաստաղին զարմացած ու ակնապիշ:
3) Սայլը ցնցվելով ընթանում էր խորդուբորդ ճանապարհով:
4) Ծառերի ճյուղերը գալարվելով փակում էին մարդկանց ճանապարհը:

64 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ** ***չկա:***

1) Նա անակնկալի գալով գրեթե ցնծաց, երբ մի պահ հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել անգամ փակ աչքերով:
2) Մենելայոսը գրկաբաց ընդունեց եկվորներին և հյուրընկալության հենց առաջին օրը նրանց պատվին մի ճոխ խնջույք կազմակերպվեց, որը ժամեր անց՝ կեսգիշերին, վերածվեց արբշիռ գինարբուքի:
3) Ինչևէ, փաստն այն էր, որ պայթյունը միայն թեթևակի ցնցել էր շենքը՝ թողնելով այն անվնաս մնա, բայց դժոխային մեքենայի՝ սարսափ առաջացրած պայթյունից հրդեհ էր բռնկվել:
4) Երբ արդեն ներսում էր, ասաց, որ քաղցած չէ, ուզում է քնել. նա ամեն կերպ ճգնում էր կռահել, այդ վատ բանը մի՞թե իսկապես կատարվել է:

65 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Լըճա՛կ, դու ես թագուհիս
բ. Չի թ’հովե մ’ալ խորշոմիս
գ. Ջիս կը պահես դողդողալով
դ. Դարձյալ խորքիդ մեջ խլռով

1) դ, գ, բ, ա
2) ա, գ, բ, դ
3) ա, բ, դ, գ
4) դ, բ, գ, ա

66 **Տրված հատվածը Հ. Շիրազի ո՞ր ստեղծագործությունից է:**

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչիք վայրագ:

1) «Բիբլիական»
2) «Թագադրում»
3) «Հայ ժողովրդի երգը»
4) «Էքսպրոմտ»

67 **Ո՞ր բառերն են թվական.**

1. հարյուրական, 2. եռակի, 3. հինգ-հինգ, 4. տասնյակ, 5. երկու երրորդ,
6. բազմահազարանոց, 7. միլիարդ, 8. այսքան:

68 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակներն են ճիշտ:**

Մեծ երգահանի կերպարը իր՝ Սևակի վկայությամբ վաղուց է եղել բանաստեղծի ստեղծագործական որոնումների կենտրոնում:

1. **երգահանի** - հատկացուցիչ
2. **վաղուց** – ժամանակի պարագա
3. **վկայությամբ** - ձևի պարագա
4. **կերպարը** – ենթակա
5. **Սևակի** - բուն բացահայտիչ

69 **Ո՞ր մտքերն են բխում տեքստի բովանդակությունից կամ *չեն* հակասում նրան:**

1982 թվականին անգլիացի հետազոտող Ջ. Ֆարմանը Անտարկտիդայի վրա հայտնաբերեց մթնոլորտային շերտի ճեղքվածք՝ ավելի քան 1000 կմ տրամագծով: Սա մեծ տագնապ առաջացրեց. չէ՞ որ օզոնային ճեղքերը խիստ վտանգավոր են կենդանի օրգանիզմների համար: Այդ շերտը պաշտպանում է Երկրի մակերևույթը Արևի ուլտրամանուշակագույն ճառագայթներից՝ թույլ չտալով դրանց՝ չափից մեծ քանակի ներթափանցումը: 1985-ին ընդունվում է Վիեննայի համաձայնագիրը՝ օզոնային շերտի պահպանման վերաբերյալ, ըստ որի՝ նախատեսվում է պարզել օզոնային շերտի քայքայման պատճառները և միջոցներ ձեռք առնել դրանց վերացման ուղղությամբ:

Բայց մինչ գիտնականները զբաղված էին այս ուսումնասիրություններով, 1992-ին մեկ այլ ճեղք հայտնաբերվեց, այս անգամ՝ Արկտիկայի վրա, հետո՝ Ուրալյան լեռների հատվածում: Ուսումնասիրողները երկար տարիներ ենթադրում էին, որ օզոնային շերտի նոսրացման ու ճեղքերի գոյացման գլխավոր մեղավորը մարդու արդյունաբերական գործունեությունն է, հատկապես այնպիսի օզոնաքայքայիչ արտադրություններ, որոնցից է, օրինակ, ֆրեոնը, որը լայն կիրառություն ունի սառեցնող սարքերում:

Հակառակն ապացուցեցին հետագա հետազոտությունները. օզոնային ճեղքերը ոչ մի կապ չունեն մարդու գործունեության հետ: Դրանց գոյացումը կապված է Երկրի առանցքի, ուստի և բևեռների աստիճանական փոփոխման հետ, ինչի պատճառով մոլորակի որոշ հատվածներում թուլանում կամ լրիվ բացակայում է մագնիսական դաշտը: Նման վիճակ մեր մոլորակը առաջին անգամ չէ, որ տեսնում է, և դա բնակլիմայական լուրջ փոփոխությունների է հասցնում՝ ազդելով և՛ կենդանիների, և՛ մարդու վրա:

1. Օզոնի քայքայման պատճառը մարդու արտադրական գործունեությունից առաջացող որոշ նյութերն են:
2. Մոլորակի բևեռների փոփոխման հետ կապված՝ որոշ հատվածներում թուլանում կամ վերանում է մագնիսական դաշտը:
3. 1982-ին գիտական շրջաններում անհանգստություն առաջացրեց Անտարկտիդայի և Ուրալյան լեռների վրա հայտնաբերված մթնոլորտային շերտի՝ 1000 կմ տրամագծով ճեղքվածքը:
4. 1985-ի համաձայնագրի հիման վրա ձեռք առնված միջոցները էլ ավելի բարդացրին իրավիճակը. ճեղքեր առաջացան երկրագնդի նաև այլ վայրերում:
5. Օզոնային շերտը խիստ կարևոր է կենդանի օրգանիզմների համար, քանի որ այն պաշտպանում է Երկրի մակերևույթը ուլտրամանուշակագույն ճառագայթներից:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Որոշ ածականներ կարող են կիրառվել նաև որպես կապ:
2. Ածականը կարող է ունենալ մակբայով արտահայտված լրացում:
3. ***Ամենա*** բաղադրիչը որոշ բառերում ածանց է, որոշ բառերում՝ արմատ:
4. ***Ական, ային, եղեն*** ածանցներով կարող են կազմվել և՛ ածականներ, և՛ գոյականներ:
5. Որակական բոլոր ածականներն ունեն համեմատության աստիճաններ:
6. Միայն մեկ արմատից կազմված (պարզ) ածականները կարող են լինել և՛ որակական, և՛ հարաբերական: